



«Նոր ժամանակի կրթությո՞ւն ու՞ն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես  
մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և  
դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Մարտին Արշակյան

Ուսումնական հաստատություն՝ Արագյուղի «Տիգրանակերտ  
կրթարան» միջնակարգ դպրոց

Երևան 2022

## Բովանդակություն

Աերածություն	3
Բնապահպանական հիմնախնդիրներ	4
Բնապահպանական / էկոլոգիական/ կրթություն	6
Բնապահպանական կրթությունը դպրոցում	8
<i>Բնապահպանական կրթության իրականացումը արտադասարանական աշխատանքներում</i>	11
<i>Բնապահպանական հասարակական կազմակերպությունների և բնապահպանական ծրագրերի դերը բնապահպանական կրթության մեջ</i>	15
<i>Եզրակացություն</i>	17
Գրականություն	18

## Ներածություն

Այս սոր մարդկության ան առաջ կան ծառայած բազմաթիվ հիմնաֆնդիրներ, որոնք ունեն ոչ միայն սերվական այլ նաև համաժողովրդակային նշանակություն ունեն: Այդ հիմնաֆնդիրների լուծման հարցում շատ կարևոր է ոչ միայն ակտուալ ունենների կատարած քայլերը, այլ նաև մարդկանց վարքագիծը:

Այդպիսի հիմնաֆնդիրների շարքին է պատկանում բնապահպանական հիմնաֆնդիրները: Բուն լի ան պահպանություն ունը շատ կարևոր է այն առումով, որ այն անմիջականորեն փոխադրում է մարդու առողջության և կենսակերպի վրա:

Բնապահպանական հիմնաֆնդիրները հարկապես սրվեցին 20-րդ դարի երկրորդ կեսերին գիտատեխնիկական հեղափոխության ժամանակ, երբ մարդը սկսեց ակտիվորեն ներգործել բնության վրա անհնա կերպով կորզել օգտակար հանածոները, կտրել անտառները, փոփոխել բնապահպանային համալիրները, անհնա կերպով աղտոտել համաշխարհային օվկիանոսը:

Այսինքն մարդը ավելի մեծ ուժով միջամտեց նյութերի շրջապտույտին, որն էլ հանգեցրեց դրա խախտմանը:

Այս սոր անընդհատ զարգացում է կլիմայի իգիդրոլոգիայի, տաքացման, դրա բացասական հետևանքների մասին: Ամենուր ակնհայտ է նը լինում կլիմայի փոփոխության պոյ ունը ում առաջացած բացասական երևույթների՝ ջրհեղեղներ, անսառային հրդեհներ, հավերժական սառույցների հալք և այլն:

Բնապահպանական հիմնաֆնդիրները մարդկության ան առաջ ծառայած լրջագույն հիմնաֆնդիրներից է, որոնք պահանջում են հրատապ ուժում, հակառակ դեպքում մեր սերունդները չեն ունենա այն առողջ և հավասարակշռված միջավայրը որտեղ կարող են ապրել և ծավալել իրենց գործունեությունը ունը:

Այս առումով շատ կարևոր է, որ բնապահպանական ինդիկներին և դրանց լուծումներին հենց փոքր տարիքից ծանոթ լինեն: Զանի որ, եթե աճող սերունդը գիտակցի, թե որքան կարևոր է երկիր մոլորակի պահպանություն ունը, ապա մենք հետագայում կունենանք առողջ միջավայր:

Այս համատեքստում շատ կարևորվում է բնապահպանական /Էկոլոգիական/ կրթության ունը և դաստիարակության ունը, քանի որ մեր մոլորակը դա մի ժառանգություն է որը թողնելու ենք մեր սերունդներին և նրանք պետք է կառուցեն հոգ տանել բնության և և նրա առաջիկա օգտագործման մասին:

### **Բնապահպանական հիմնախնդիրներ**

Մարդը երկիր մոլորակը փոփոխելով այն դարձրել է <մարդածին>: Բնության մեջ չկա մի ոլորտ, որտեղ մարդը ներթափանցած և փոփոխած չլինի: Բնության վրա հիմնականում մարդը ազդում է իր տնտեսական գործունեությամբ՝ անընդհատ կորզելով բնական և համաշխարհային օվկիանոսի ռեսուրսները, դեպի բնություն դուրս նետելով թափոններ, աղտոտելով օդը: Եվ ողջ այս գործունեությունը ի վերջո հանգեցրեց կլիմայի փոփոխությանը, որը այսօր կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է:

Մինչև 1970-ականների վերջերը կլիմայի փոփոխության խնդրով հետաքրքրվում էին հիմնականում գիտնականները: 1979թ. Կլիմայի առաջին համաշխարհային համաժողովին ներկայացվեցին մի շարք զեկույցներ, որոնցում բերվում էին տվյալներ, որ մարդկային գործունեությունն էական ազդեցություն ունի կլիմայի փոփոխության վրա: Առաջին հերթին այս փաստը գրավեց լրագրողների ուշադրությունը, ինչին հետևեց լայն հանրության և կառավարությունների ուշադրությունը: 1988թ. կլիմայի փոփոխության խնդիրը Միավորված ազգերի կազմակերպության կողմից ճանաչվել է որպես մարդկության առջև կանգնած առավել հրատապ գլոբալ մարտահրավերներից մեկը:<sup>1</sup>

Շատ գիտնականների համար պարզ դարձավ, որ կլիմայի փոփոխության դեմ պայքարը հնարավոր է և անհրաժեշտ: Այդ պայքարը, սակայն, արդյունավետ չէր լինի, եթե դրան չմիանային աշխարհի բոլոր երկրները: Իսկ դա առավել նպատակահարմար էր կազմակերպել Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո: Այդ պատճառով 1992թ. ՄԱԿ-ի հատուկ միջազգային համաժողովին երկրները համաձայնություն ձեռք բերեցին կլիմայի հարցերով համագործակցության անհրաժեշտության մասին: Երկրների

<sup>1</sup> <Կլիմայի սկսված փոփոխությունները> ուսումնական ձեռնարկ: Երևան: ԱՄԻ գաղափարային ծրագիր: 2021թ., էջ 308

այդ համաձայնությունները համախմբվեցին մեկ միասնական միջազգային փաստաթղթում, որը կոչվում է Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա:<sup>2</sup>

Կոնվենցիային միացած երկրների շարքում է նաև Հայաստանը, չնայած այն բանի որ այն համարվելով փոքր և զարգացող երկիր համամատած խոշոր երկրների քիչ պարտավորություններ ունի:

ՀՀ-ում ևս բազմաթիվ են բնապահպանական հիմնախնդիրները որոնք պահաջում են ինչպես պետական, այնպես էլ տեղական մակարդակով լուծումներ:

Մինչև 90-ական թվականները արդեն իսկ առկա էին բազմաթիվ խնդիրներ, որոնցից կարևորագույնը Սևանա լճի հիմնախնդիրն էր:

Սակայն դրանք հատկապես ավելի սրվեցին 1990-ական թվականներին տնտեսական ճգնաժամի պայմաններում. հատվեցին անտառները, վերացման եզրին հասցվեց Սևանա լճի ձկնատեսակները, անխնա շահագործվեց ընդերքը, աղտոտվեցին գետերը:

Այսօր ՀՀ-ում շատ կարևոր խնդիր է նաև թափոնների կառավարումը , քանի որ դրանք անխնա կերպով թափվում են շրջակա միջավայր:

Այս առումով շատ կարևոր դեր ունի բնապահպանական կրթության և դաստիարակության իրականացումը դպրոցներում, որպեսզի դեռ փոքր տարիքից երեխաները գիտակցեն դրա կարևորությունը:

---

<sup>2</sup> <Կ իմաց սկսան սրկղիկ> ուսու մնական ձեռնարկ: Երևան: ԱԿ-ի զարգացման ծրագիր: 2021թ., Էջ 308

## Բնապահպանական / էկոլոգիական/ կրթություն

Էկոլոգիական ճգնաժամի պայմաններում արդիականության կարևորագույն խնդիրներից է բնապահպանական կրթության և դաստիարակության նոր մոտեցումների մշակումը: Բնապահպանական կրթության հիմնական խնդիրը շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող հարցերի վերաբերյալ սովորողների իրազեկության բարձրացումն է և այդ հարցերի լուծմանը նրանց մասնակցությունը: Էկոլոգիական կրթությունն իր մեջ կրում է ոչ միայն կրթական, ուսուցողական, այլև դաստիարակչական և իրազեկման գործառույթներ: Այս դեպքում էկոլոգիական կրթությունը դիտարկվում է որպես յուրօրինակ հասարակական-մշակութային գործունեություն:

Ժամանակից էկոկրթությունը միտված է՝

- Աջակցելու շրջակա միջավայրի և դրա պատմական զարգացման մասին տեղեկատվության տարածմանը,
- Մշակելու էկոլոգիական խնդիրների լուծման համար ռացիոնալ մոտեցումների նոր մեթոդաբանական չափանիշներ և դրույթներ,
- Բարձրացնելու հասարակության քաղաքացիական պատասխանատվությունը, կայուն զարգացման պայմաններում, էկոլոգիական խնդիրների լուծմանը մասնակից լինելու առումով,
- Ամրակայելու սովորողների՝ աշխարհի էկոլոգիական –հումանիտար քարտեզի ձևավորմանն անհրաժեշտ արժեքավոր գիտելիքներն ու կողմնորոշումները,
- Որպես կարևորագույն խնդիր՝ նպաստել << մարդ-բնություն- հասարակություն>> համակարգում ներդաշնակ փոխհարաբերությունների ապահովմանը:<sup>3</sup>

<sup>3</sup> ԲսգետN3, 2014, Բնապահպանական թեմաների ու սուր ուղևորության ին սեփնուլ ոգիաներով:  
Գասպոյ սն, ԳՊողոյ սն, էջ 18

ՀՀ –ում 2001 թվականից ընդունվել է Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին օրենքը որի կարևորագույն հասկացություններից է Էկոլոգիական կրթությունը և Էկոլոգիական դաստիարակությունը

**Էկոլոգիական կրթություն`** անընդմեջ գործընթաց է` նպատակաուղղված անձի Էկոլոգիական գիտելիքների ուսուցմանը, Էկոլոգիական դաստիարակությանը, Էկոլոգիական մշակույթի արմատավորմանը, շրջակա միջավայրի պահպանության, բնօգտագործման և Էկոլոգիական անվտանգության բնագավառում անձի ճիշտ և խելամիտ կողմնորոշմանը, ունակությունների դրսևորմանը և վարքագծի ձևավորմանը.

**Էկոլոգիական դաստիարակություն`** Էկոլոգիայի մշակույթի հիմքը և անբաժանելի մասն է, շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված անընդմեջ, համակարգված գործընթաց, որը հնարավորություն է տալիս քաղաքացիներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ, ձևավորել հմտություններ և բացահայտել ունակություններ, դրսևորել բարոյական չափանիշներ և վարքագիծ` բնության հետ փոխներգործության ընթացքում.<sup>4</sup>

Էկոլոգիական կրթության համակարգը ՀՀ միասնական կրթական համակարգի բաղադրիչ է: Այն պետական կրթական չափորոշիչների, կրթական հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակների և ուղղվածության կրթական ծրագրերի, դասընթացների, ուսումնական հաստատությունների ու կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջություն է: Էկոլոգիական կրթությունը ներառում է հետևյալ մակարդակները` նախադպրոցական (Էկոլոգիական կրթությունն ընտանիքում և նախադպրոցական հաստատություններում), միջնակարգ, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական, հասարակության լայն խավերի, այդ թվում զինված ուժերի կրթությունը:<sup>5</sup>

<sup>4</sup> [ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՄԻՆ \(irtek.am\)](http://irtek.am)

<sup>5</sup> <https://hy.wikipedia.org/wiki/>

## Բնապահպանական կրթությունը դպրոցում

Էկոլոգիական և կայուն զարգացման անընդմեջ կրթությունը Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի անբաժանելի մասն է: Համաձայն «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը պարտադիր է կրթական համակարգի բոլոր մակարդակներում<sup>6</sup>:

Բնապահպանական կրթությունը դպրոցի կարևորագույն խնդիրներից մեկն է , հատկապես սովորողների մոտ բնապահպանական գիտակցության ձևավորումը: Այն սովորողների մոտ ձևավորում է բարոյական մշակույթ և անդրադառնում անհատի բնապահպանական կրթության վրա, ինչպես նաև խթանում՝ բնապահպանական գիտակցության զարգացմանը:

Բնապահպանական կրթությունը դպրոցում իրականացվում է տարրական դասարաններից սկսած, որն էլ հնարավորություն է տալիս սովորողներին դեռ մանկուց կապ ստեղծել բնության և հասարակության միջև, այն դարձնելով մեկ ամբողջություն և հենց ինքն էլ դառնում է այդ ամբողջության մի մասնիկ:

Բնապահպանական կրթությունը դպրոցներում իրականացվում է ինչպես տարբեր առարկաների շրջանակներում այնպես էլ դպրոցին հատկացվող դպրոցական բաղադրիչ ժամերի միջոցով հնարավոր է առանձին ուսումնասիրել առանձին առարկաների տեսքով:

Ստորև կներկայացվի բոլոր այն առարկաները որոնք իրենց մեջ ներառում են բնապահպանական կրթություն:

---

<sup>6</sup> <http://www.irtek.am/views/act.aspx?aid=93900/>



Առարկա	դասարաններ	նկարագրություն
Ես և շրջակա աշխարհը	2-րդ, 3-րդ, 4-րդ	Առարկան հենց տարրական դպրոցից նպաստում է երեխաների մոտ բնության նկատմամբ պատասխանատվության բարձրացմանը: Եվ այս առումով շատ կարևոր է ուսուցչի կողմից ճիշտ մոտեցումը, որպեսզի երեխան հասկանա բնության պահպանության կարևորությունը:
Հայրենագիտություն	5-րդ	Կարող է նպաստել երեխայի մեջ սեփական երկրի նկատմամբ հոգատարության և պատասխանատվության բարձրացմանը
Բնագիտություն	5-րդ, 6-րդ	Երեխաները ավելի լավ են ճաշում բնությունը, բնական երևույթները, բացահայտում մարդ-բնություն կապը: Ծանոթանում կենդանական և բուսական աշխարհի հետ: Եվ հենց այս առումով շատ կարևոր է ցույց տալ սովորողին մարդու ազդեցությունը բնության վրա, թե ինչ հետևանքներ է այն ունենում և ինչպես կարելի է պահպանել բնությունը:
Աշխարհագրություն, Հայաստանի աշխարհագրություն	6,7,8,9,10,11,12-րդ	Այս չորս առարկաները հենց այն առարկաներն են որոնց շրջանակում ամենաշատն են ուսումնասիրվում բնապահպանական հիմնախնդիրները: ԵՎ շատ կարևոր է այս առարկաների միջև միջառարկայական կապերի ստեժումը հատկապես բնապահպանական հարցերը ավելի լավ վեր հանելու և հասկանալու համար
Կենսաբանություն	7,8,9,10,11,12-րդ	
Քիմիա	7,8,9,10,11,12-րդ	
Ֆիզիկա	7,8,9,10,11,12-րդ	

Բացի վերը նշված առարկաների շրջանակներում բնապահպանական խնդիրները ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված ծրագրերով երաշխավորվում է.

«Կյանքի հմտություններ» (2-8-րդ դասարաններ), «Բնապահպանություն» (7-8-րդ կամ 8-9-րդ դասարաններ), «Էկոլոգիա» (8-9-րդ դասարաններ), «Էներգիայի և ռեսուրսների օգտագործում» (7-րդ կամ 8-րդ դասարան), «Ֆերմերային գործ» (11-12-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը:

Նշված առարկաների ուսուցումը այլ դասարաններում Հաստատության կողմից կարող է իրականացվել դրանց առարկայական ծրագրերը սահմանված կարգով ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատելուց հետո:

Ավագ դպրոցի խորացված ուսուցմամբ հոսքերի համար կարող են երաշխավորվել լրացուցիչ հետևյալ՝ «Բնօգտագործման և բնապահպանության հիմունքներ» (10-11-րդ դասարաններ), «Էկոլոգիայի և կայուն զարգացման հիմունքներ» (10-11-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը:<sup>7</sup>

Այս առումով կարծում եմ շատ կարևոր է, հետագայում բնապահպանական կրթությունը իրականացվի ոչ թե առանձին առարկաների շրջանակներում կամ դպրոցական բաղադրիչի հաշվին այլ ներմուծվի առանձին առարկա դպրոցական պարտադիր ժամաքանակից հենց առաջին դասարանից մինչև տասներկուերորդ դասարան: Սա կարծում եմ պարտադիր է և օրհասական, քանի որ բնապահպանական հիմնախնդիրները դրանք երկրագնդին սպառնացող լրջագույն հիմնախնդիրներ են և հետագա աղետներից խուսափելու համար պետք է շատ ավելի լուրջ մոտենալ բնապահպանական կրթությանը:

---

<sup>7</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154629>

## ***Բնապահպանական կրթության իրականացումը արտադասարանական աշխատանքներում***

Արտադասարանական աշխատանքները ընդլայնում են սովորողների մտահորիզոնը, նպաստում է ինքնակրթության հմտությունների զարգացմանը , ստեղծագործական ունակությունների զարգացմանը, ձևավորում է աշխարհայացք և սովորողների ճիշտ դիրքորոշմանը:

Բնապահպանական կրթություն իրականացնելիս շատ կարևոր է հատկապես արտադասարանական աշխատանքների կազմակերպումը քանի որ այս դեպքում նրանք կարողանում են իրենց ստացած տեսական գիտելիքները կիրառել գործնականում, իրականացնել տարբեր աշխատանքներ:

Ստորև կքննարկենք մի շարք արտադասարանական աշխատանքներ որոնք կարելի կիրառել դպրոցների կողմից բնապահպանական կրթություն իրականացնելիս.

### ***1. Լրացուցիչ կրթական ծրագրեր. Ֆակուլտատիվներ.***

Կազմվում են բնապահպանական տարբեր լրացուցիչ ծրագրեր , որոնք կարող են իրականացվել դասերից հետո առանձին գործող բնապահպանական ակումբներում:

Օրինակ՝ «Ինչպես է կլիմայի փոփոխությունը ազդում լեռնային տարածաշրջանների վրա»

«Ինչպես է կլիմայի փոփոխությունը ազդում ափամերձ տարածաշրջանների վրա»

«Ինչպես է կլիմայի փոփոխությունը ազդում անտառների վրա»

### ***2. Դերային խաղեր: Քննարկումներ: Կլոր սեղաններ: Բանավեճեր***

Դերային խաղերը հատկապես շատ արդյունավետ և կիրառելի է տարրական դպրոցում, քանի որ այդ տարիքում երեխաները սիրում են տարբեր կերպարների միջոցով

պատկերացնել և տեսնել խնդիրը: Այս տարիքում շատ ավելի հեշտ է ազդել երեխայի հուզական ոլորտի վրա: Իսկ արդեն միջին և ավագ դպրոցում կարելի է իրականացնել տարբեր քննարկումներ, կլոր սեղաններ, բանավեճեր, որպեսզի սովորողները կարողանան ազատ արտահայտել իրենց կարծիքը: Դրանք կարելի է կազմակերպել ինչպես դասղեկի ժամերին, այպես էլ առանձին միջոցառումների տեսքով: Շատ ավելի արդյունավետ կլինի, երբ այդ քննարկումներին մասնակցեն նաև ծնողները:

### ***3. Վիկտորինաներ: Մրցակցային խաղեր:***

Տարբեր մրցակցային խաղերի, վիկտորինաների կազմակերպումը կնպաստի բնապահպանական հիմնախնդիրների սովորողների կողմից ավելի մանրամասն ուսումնասիրմանը և նոր գիտելիքների ձեռք բերմանը:

Կարելի է ընտրել տարբեր բնապահպանական թեմաներ որոնց շուրջ կարելի է կազմակերպել վիկտորինաներ: Կամ կարող են օգտվել արդեն իսկ պատրաստի ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված տարբեր ձեռնարկներում առկա վիկտորինայի քարտերից: Օրինակ <Կլիմայական արկղիկ> ուսումնասովանողական ձեռնարկից:

### ***4. Զուցադրություններ, Կինոդիտումներ***

Այս արտադասարանական աշխատանքը կարելի է կիրառել բոլոր կրթական մակարդակներում: Կարելի է կազմակերպել առանձին սոցիալական հոլովակների, ֆիլմերի դիտումներ որից հետո իրականացնել քննարկումներ: Ֆիլմերը կարող են լինել նաև ռուսերեն կամ անգլերեն համապատասխան ուսուցչի ներկայությամբ: Ինչպես նաև կարելի է կազմակերպել տարբեր մոդելների ցուցադրություններ:

Օրինակ՝ Սովորողական լամպի և լեդ լամպերի ցուցադրություն, դրանց տարբերությունը հասկանալու համար, հողմահարի մոդելի ցուցադրություն և այլն:

### **5. Մասայական միջոցառումներ**

Օրինակ՝

- *Երկրի օր (մարտի 20)*
- *Ջրային ռեսուրսների համաշխարհային օր (մարտի 22)*
- *Վայրի բնության համաշխարհային օր (մարտի 3)*
- *Օդերևութաբանի համաշխարհային օր(մարտի 23)*
- *Երկրի ժամ(մարտի 24)*
- *Մայր մոլորակի համաշխարհային օր (ապրիլի 22).*

Երկիր մոլորակի պահպանությանը նվիրված այս միջազգային օրերին կարելի է կազմակերպել միջոցառումներ ինչպես համադպրոցական այնպես էլ համայնքային:

#### 6. Հասարակությանն օգտակար և սոցիալական նշանակություն ունեցող միջոցառումներ

Օրինակ ` կարելի է կազմակերպել ծառատունկ, աղբահավաքություն, թափոնների տեսակավորում և վերաօգտագործում, ֆլեշմոբեր և այլն:

#### 7. Տեղեկատվա-քարոզչական գործունեություն

Հատկապես շատ արդյունավետ է երբ բարձր դասարանի աշակերտները տեղեկություններ են տալիս ավելի ցածր դասարանների աշակերտներին: Կամ կարելի է կազմակերպել համայնքի մասշտաբով: Օրինակ համայնքում բաժանել թուղիկներ ունեցած խնդիրների և դրանց լուծման ուղիների մասին: Կարող են նաև կազմակերպել ցուցադրություններ կամ դասընթացներ հարևան դպրոցների համար:

#### 8. Էքսկուրսիաներ

Կազմակերպել ուսուցողական էքսկուրսիաներ տարբեր տեսակի գործարաններ. Օրինակ ` թափոնների վերամշակման, թղթի արտադրության, պլաստիկի արտադրության:

Կարելի է նաև կազմակերպել արշավներ տարբեր բնական հուշարձաններ կամ խիստ աղտոտված վայրեր և միառժամանակ իրականացնել աղբահավաքություն:

### ***9. Նախագծային աշխատանքներ***

Նախագծային աշխատանքներ իրականացնելը շատ կարևոր է քանի որ սովորողները կարողանում են ազատորեն արտահայտել իրենց տեսակետները, ինքնուրույն գտնել լուծումներ:

Քանի որ այսօր նախագծային ուսուցումը շատ կարևորվում է իրականացվելու է դասապրոցեսի ընթացքում ուստի այն կարելի է իրականացնել և՛ որպես արտադասարանական աշխատանք և՛ որպես ուսուցման գործընթացի մի մաս:

***Բնապահպանական հասարակական կազմակերպությունների և բնապահպանական ծրագրերի դերը բնապահպանական կրթության մեջ***

Բնապահպանական կրթության և դաստիարակության բնագավառներում զգալի դեր ունեն հասարակական կազմակերպությունները և նրանց հետ համագործակցող մասնագետները, ովքեր ստեղծում են ուսումնական ծրագրեր, ձեռնարկներ: Այս ծրագրերի շրջանակներում ստեղծվում են նաև ուսուցիչների վերապատրաստման մեթոդական ձեռնարկներ, իրականացվում են դասընթացներ դպրոցականների ուսուցման արդյունավետությունն ապահովելու համար:<sup>8</sup>

Օրինակ.

«Էյ ԹԻ ՓԻ» բնապահպանական բարեգործական ընկերությունը իրականացնում է բազմաթիվ ծրագրեր թե՛ ուսուցիչների վերապատրաստման և թե՛ նպաստում է դպրոցականների բնապահպանական կրթության բարձրացմանը / ՀՀ-ի տարբեր ուսումնական հաստատություններում ստեղծել են էկոակումբներ, կազմակերպում է աշակերտների այց տնկարաններ, իրականացնում են ծառատունկեր: Հատկապես շատ կարևոր է այս կազմակերպության դերը էկոակումբների ստեղծման առումով քանի որ այդ էկոակումբներում սովորողները ստանում են լուրջ բնապահպանական կրթություն և դաստիարակություն

<<Էյ ԹԻ ՓԻ>> նախագիծը իր բոլոր ծրագրերի միջոցով կիրառում է կրթություն և իրազեկում՝ զարգացնելով շրջակա միջավայրի հզորացված տնտեսների հաջորդ սերունդ: Անկախ նրանից, նրանք կրթություն են ստանում Հայաստանում թե՛ աշխարհի այլ դպրոցներում, «Էյ ԹԻ ՓԻ» -ի ինտերակտիվ ծրագրերը նպատակ ունեն բարձրացնել յուրաքանչյուր մարդու

<sup>8</sup> <http://www.irtek.am/views/act.aspx?aid=93900/>

բնապահպանական գիտակցությունը՝ հուսալով, որ պատասխանատու վարքագիծը և կայուն գործելակերպերը կդառնան հրամայական բոլորի համար:<sup>9</sup>

Բնապահպանական կրթության հարցում մեծ դեր ու նշանակություն ունի նաև ԲԿՑ / Բնապահպանական կրթության ցանցը/: ԲԿՑ-ն քաղաքացիական հասարակության, պետական, կրթական և միջազգային ավելի քան 15 կառույցների միություն է, որի հիմնական նպատակն է աջակցել Հայաստանում դպրոցական բոլոր մակարդակներում և համայնքներում բնապահպանական կրթության խրախուսման և ուժեղացման աշխատանքներին: ԲԿՑ-ի բոլոր անդամների կողմից Հուշագրի ստորագրմամբ Հայաստանը սկսում է բնապահպանական կրթության բարելավման գործողություններ՝ լրացուցիչ գիտելիքի և փորձի փոխանակման միջոցով:<sup>10</sup>

Շատ կարևոր գործունեություն է ծավալում բնապահպանական կրթության հարցում նաև ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը, ՅՈՒՆԻՍԵՖ-ը (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը), ԿԱԶԱ շվեցարական մարդասիրական հիմնադրամը, NABU հայաստանյան մասնաճյուղը և այլն:

Շատ կարևոր է դպրոցների համագործակցությունը նմանատիպ տարբեր կառույցների հետ կրթությունն ավելի արդյունավետ դարձնելու համար քանի որ բնապահպանական կրթությունը տեսական գիտելիքից ու գիտագործնական ունակություններից զատ, նախ և առաջ, մոտեցում է, փիլիսոփայություն և գործիք՝ մարդու և բնության միջև կապը ընկալելու, հասկանալու, մեկնաբանելու և այդ ամենի հիման վրա շրջակա միջավայրի հանդեպ առանձին անհատների, մարդկանց խմբերի և ողջ հասարակության վարքագծի նոր մոդելներ մշակելու առումով: <sup>11</sup>

---

<sup>9</sup> <https://www.armeniatree.org/en/education/>

<sup>10</sup> <https://ace.aua.am/hy/environmental-education/een/#eeesd/>

<sup>11</sup> <http://www.irtek.am/views/act.aspx?aid=93900/>



## *Եզրակացություն*

20-րդ դարի երկրորդ կեսը կարելի է համարել ինչպես բնության արագընթաց քայքայման, այնպես էլ բնապահպանական կրթության ամենակտիվ քարոզչության ժամանակաշրջան:

Ավելի հարմարավետ և հարուստ ապրելու մարդկության ձգտումը շատ արագ հասցրեց մի իրավիճակի, երբ մարդկային հասարակությունը հանգեց բնությունը պահպանելու, պաշտպանելու առաջնահերթության գաղափարին, որն իր հերթին հանգեցրեց բնապահպանական կրթության անհրաժեշտության ընկալմանը:

Կատարված աշխատանքը հիմնականում նպատակ ունի փաստելու և եվս մեկ անգամ մատնանշելու բնապահպանական կրթության կարևորությունը :

Մենք պետք է քաջ գիտակցենք, եթե չունենք առողջ միջավայր չենք կարող ունենալ ոչ տնտեսական զարգացում ոչ էլ առողջ ապագա:

Ուստի շատ կարևոր է հիմա կատարել քայլեր հետագայում հնարավորինս քիչ խնդիրներ ունենալու համար:

## Գրականություն

1. Բազեյտ՝N3, 2014, Բնապահպանական թեմաների ու սուղու մը նախագծայի ին սեփնուլ ոգիաներով:  
Գասպոյ ան, ԳՊոլոյ ան
2. <Կ իմայի ական պոկոյիկ> ու սու մնական ձեռնարկ: Երևան: ԱԿԻ զարգացման ծրագիր: 2021թ
3. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=93900/>
4. <https://www.armeniatree.org/en/education/>
5. <https://ace.aua.am/hy/environmental-education/een/#eeesd/>
6. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154629>
7. [ԷՆՐՈՒԿԱՆ ԿՈՒՐՅԱԵՆՆԱՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՄԻՆ \(irtek.am\)](http://www.irtek.am)
8. <https://hy.wikipedia.org/wiki/>

Ա